



Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ
էներգախնայողության հարցերի քննարկում՝
Գեղարքունիքում

14:39, 22 Հունիս, 2011

ԳԱՎԱՌ, 22 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՄ : Գավառում հունիսի
21-ին տեղի է ունեցել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ
էներգախնայողության հիմնադրամի մասնակցությամբ հանդիպում-քննարկում:
Հրավիրված էին մասնակցելու Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներ,
կրթական եւ առողջապահական հաստատությունների տնօրեններ, մարզպետարանի
ստորաբաժանումների ղեկավարներ:

Բացելով հանդիպումը՝ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտուշ Ղուկասյանը
նշել է, որ արագ զարգացող եւ փոփոխվող մերօրյա աշխարհում շատ կարեւոր է
էներգետիկ այլընտրանքային աղբյուրների ստեղծումը, ինչի ուղղությամբ
աշխատանքներ է ձեռնարկել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ
էներգախնայողության հիմնադրամը:

Գեղարքունիքի մարզում կառույցի գործունեության մասին զեկուցել է հիմնադրամի
փոխտնօրեն Հայկ Եսայանը: Նա նշել է, որ Գեղարքունիքի մարզը հիմնադրամին
ծանոթ է արդեն տարիներ շարունակ, եւ իրենց օժանդակությամբ մարզի 13
դպրոցներում իրականացվել է ջեռուցման համակարգի կառուցման ծրագիր, իսկ
սոցիալապես անապահով շատ ընտանիքների տրամադրվել են գազի վառարաններ,
ենթավարկեր են տրամադրվել որոշ կազմակերպությունների, ֆինանսավորվել են
կառուցվող ՀԷԿ-եր, գնահատվել է վերականգնվող էներգիայի ներուժը:

«էներգախնայողությունը որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր» թեմայով
զեկույցում հիմնադրամի էներգախնայողության ծրագրի ղեկավար Տիգրան Սեկոյանը
նշել է, որ Գեղարքունիքի մարզում անչափ կարեւորվում է էներգախնայողության
խնդիրը, քանի որ կրթական, առողջապահական, մշակութային, վարչական շենքերը
ձմռան ամիսներին հիմնականում թերջեռուցման պատճառով կորցնում են էներգիայի
40-60 տոկոսը շենքային անհարմարությունների պատճառով:

Կտուրների, դռների, լուսամուտների, անգամ պատերի՝ Գեղարքունիքի մարզի
կլիմայի անհամապատասխան շահագործումը հանգեցրել է նրան, որ հիմնարկ-
ձեռնարկությունները ջեռուցման սեզոնի ընթացքում աշխատում են մեծ
կորուստներով եւ անհարկի ծախսում են շատ փողեր՝ այդպես էլ չապահովելով
բավարար ջեռուցում: Տ.Սեկոյանն առաջարկել է վերականգնվող էներգետիկայի եւ
էներգախնայողության ճիշտ միջոցն այս հարցում. շատ կարեւոր է այստեղ շենքերի
հիմնանորոգման խնդրի լուծումը եւ ջեռուցվող տարածքներում ջերմամեկուսացման
ապահովումը: Այդ դեպքում արդեն կարելի կլինի խոսել էներգախնայողության
մասին:

Հիմնադրամի ներկայացուցիչները հանդիպման մասնակիցներին բաժանել են հիմնադրամի գործունեության եւ Հայաստանի վերկանազնվող էներգետիկայի ու էներգախնայողության մասին պատմող տեղեկատվական թերթիկներ: